ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (Կ-598-26.05.2023-ՏՀ-011/0)» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մաս	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասով սահմանված է. «Սույն օրենքի գործողությունը չի տարածվում տարանցիկ փոխադրվող պարենային եւ ոչ պարենային արտադրանքի, դեղամիջոցների (այդ թվում՝ անասնաբուժական), միջուկային նյութերի, հատուկ տրոհվող նյութերի, միջուկային էներգիայի բնագավառում օգտագործվող այլ արտադրանքի, ռազմական նշանակության արտադրանքի, օդանավերի եւ դրանցում տեղադրված սարքավորումների, քաղաքաշինության օբյեկտների վրա»: Նշենք, որ հասկանալի չէ՝ այս մասում տարանցիկ փոխադրվող պարենային արտադրանքի վրա	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասից հանվել է «պարենային և» բառերը:	Ընդունվել է:

			օրենքի գործողությունը չտարածվելու վերաբերյալ նշում կատարելու անհրաժեշտությունը, եթե Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասով սահմանված Նախագծի կարգավորման առարկայի մեջ արդեն իսկ սահմանված է վերջինիս գործողության տարածումը միայն ոչ պարենային արտադրանքի վրա: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասում պարենային արտադրանք վրա օրենքի գործողությունը չտարածելու վերաբերյալ նշումը հանել:		
2.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 2-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածում «Հայաստանի Հանրապետության օրենքներից» բառերը փոխարինել «օրենքներից» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված իրավադրույթը, այն է՝ «3. Օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը եւ «օրենք» բառը: Օրենքի	Ընդունվել է: Նախագծի 2-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			կրճատ անվանումը հիշատակելիս դրանում նշվում է օրենքի վերնագիրը:»:		
3.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ, 9-րդ հոդվածի 3-րդ մաս	Նախագծի մի շարք հոդվածներում կիրառված են այնպիսի հասկացություններ, ձեւակերպումներ կամ դրույթներ, որոնք միանշանակ չեն ընկալվում, չեն համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքի պահանջներին եւ հստակեցման կարիք ունեն. օրինակ՝ Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով սահմանված է. «արտադրանքի հետկանչ՝ տնտեսավարող սուբյեկտի կողմից շուկայանհանված ոչ պարենային արտադրանքի շրջանառության դադարեցման եւ շրջանառությունից հանման (հետկանչ) գործողությունների համալիր, որն ուղղված է ( ) անբարեխիղճ գործելակերպի կանխարգելմանը ( )»: Նշենք, որ Նախագծի վերլուծությունից հասկանալի չէ՝ «անբարեխիղճ գործելակերպ կանխարգելում» հասկացությունն ինչ է իրենից ներկայացնում, հետեւաբար որոշակի չէ, թե կոնկրետ ինչ գործելակերպի	Ընդունվել է: Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			կանխման համար կարելի է կիրառել արտադրանքի հետկանչ:		
4.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մաս	Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում են շուկայի վերահսկողության իրականացման ձեւեր, ընդ որում՝ Նախագծով նշվում է, որ վերահսկողության ձեւերից ստուգումը եւ ուսումնասիրությունն իրականացվում են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» օրենքով սահմանված կարգով: «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասով սահմանված է. «Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետություններում գրանցված եւ Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնող առեւտրային կամ ոչ առեւտրային կազմակերպություններում, հիմնարկներում (այդ թվում՝ օտարերկրյա իրավաբանական անձի), իրավաբանական անձի մասնաճյուղում կամ ներկայացուցչությունում, տեղական	Ընդունվել է: Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակը նախաձեռնել է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքի վերանայման և լրացուցիչ հստակեցման արմատական գործընթաց, որի շրջանակներում կնախատեսվեն համապատասխան կարգավորումներ «փորձանմուշի գնման» իրավադրույթի վերաբերյալ:	Ընդունվել է:

			ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաեւ անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ տնտեսավարող սուբյեկտներ) գործունեության եւ քաղաքաշինական օբյեկտներում ստուգումների եւ ուսումնասիրությունների կազմակերպման եւ անցկացման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաեւ սահմանում է դրանց իրականացման միասնական կարգը»: Վերը մեջբերվածից բխում է, որ Նախագծով սահմանված ստուգումների եւ ուսումնասիրությունների վերաբերյալ կարգավորումները պետք է համապատասխանեն «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» օրենքի պահանջներին: Այս համատեքստում հարկ է նշել, որ Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանվում է, որ լիազոր մարմնի կողմից վերահսկողության ընթացքում արտադրանքի՝ Հայաստանի Հանրապետության օրենքներին եւ այլ իրավական ակտերին պահանջներին		

			համապատասխանությունը որոշելու նպատակով լիազոր մարմնի պաշտոնատար անձի կողմից կատարվում է փորձանմուշի գնում: Հատկանշական է, որ չի նախատեսվում որեւէ փոփոխության կամ լրացման կատարում փորձանմուշի գնման մասով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» օրենքում: Ինչի արդյունքում ստացվում է, որ ստուգումների եւ ուսումնասիրությունների իրականացման ընթացքում փորձանմուշի գնում հնարավոր չէ կատարել: Հիմք ընդունելով Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը, որով սահմանված է, որ շուկայի վերահսկողության իրականացման ձեւերից դիտարկումն իրականացվում է «Թմրամիջոցների եւ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» օրենքով սահմանված դեպքերում, ինչպես նաեւ այն հանգամանքը, որ այդ օրենքում նույնպես չի նախատեսվում կատարել որեւէ փոփոխություն կամ լրացում՝ կարող ենք փաստել, որ վերը նշված		

			խնդիրը առկա է նաեւ «Թմրամիջոցների եւ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» օրենքով նշված դիտարկման դեպքերում փորձանմուշի գնման հարցում:		
5.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 5-րդ հոդվածի 4-րդ մաս	Նախագծի 5-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված է. «Լիազոր մարմինը վերահսկողության ընթացքում այլ պետական մարմնի լիազորություններին առնչվող խախտումների բացահայտման դեպքում 3 աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնում է տվյալ պետական մարմնին»: Այսպես՝ վերը մեջբերված դրույթով լիազոր մարմնի համար նախատեսվում է պարտականություն այլ պետական մարմնի լիազորություններին առնչվող խախտումների բացահայտման դեպքում վերջիններիս այդ մասին տեղեկացնելու վերաբերյալ, մինչդեռ սահմանված չէ, թե ինչ եղանակով է դա կատարվում (գրավոր թե բանավոր, ակտ կազմելու միջոցով թե ոչ) եւ ինչ ժամկետում:	Ընդունվել է: Նախագծի 5-րդ հոդվածի 4-րդ մասում կատարվել է համապատասխան լրացում:	Ընդունվել է:
6.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր	Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է. «Լիազոր մարմնի պաշտոնատար անձը տալիս	Ընդունվել է:	Ընդունվել է:

			է՝ 1) արտադրանքի իրացումը կասեցնելու, շուկայից հետ կանչելու, օգտահանելու կամ ոչնչացնելու մասին կարգադրագրեր. 2) «Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքով սահմանված չափման միջոցների իրացումը կամ շահագործումն արգելելու մասին կարգադրագրեր»: Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի կապակցությամբ նշենք, որ Նախագծում առկա են կարգավորումներ միայն արտադրանքը շուկայից հետ կանչելու, օգտահանելու եւ ոչնչացնելու վերաբերյալ, մինչդեռ արտադրանքի իրացման կասեցման, կասեցման հիմքերի, դեպքերի վերաբերյալ որեւէ կարգավորում սահմանված չէ: Ինչի արդյունքում հասկանալի չէ, թե որ դեպքերում է լիազոր մարմնի պաշտոնատար անձը տալիս արտադրանքի իրացումը կասեցնելու կարգադրագիր: Բացի այդ՝ նշենք, որ Նախագծի 6-րդ հոդվածի 3-րդ մասով	Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում կատարվել է համապատասխան լրացում: «Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքով սահմանված չափման միջոցների իրացումը կամ շահագործումն արգելելու մասին կարգադրագրերը հաստատելու վերաբերյալ իրավադրույթ արդեն իսկ նախատեսված է «Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով, ուստի նույնաբովանդակալից դրույթ նախատեսելու անհրաժեշտությունը	

			սահմանված է. «Սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի Կարգադրագրի ձեւերը հաստատում է լիազոր մարմնի ղեկավարը»: Այս դեպքում հասկանալի չէ՝ Նախագծի 2-րդ մասի 2-րդ կետում նշված կարգադրագրի ձեւն ում կողմից է հաստատվում:	բացակայում է:	
7.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 6-րդ հոդվածի 7-րդ մաս	Նախագծի 6-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված է. «Կարգադրագրերով նախատեսված սահմանափակող միջոցները վերացնում է լիազոր մարմնի ղեկավարը՝ տնտեսավարող սուբյեկտի դիմումով կարգադրագրերի կատարման ստուգման դրական արդյունքների հիման վրա»: Այս դեպքում որոշակիացման կարիք ունի այն հարցը, թե ում կողմից է իրականացվում կարգադրագրերի կատարման ստուգումը, ինչ ընթացակարգով եւ ինչ ժամկետներում:	Ընդունվել է: Համապատասխան կարգավորում կնախատեսվի Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի կողմից մշակվող «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքի նախագծով:	Ընդունվել է:
8.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ	Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված է, որ Կառավարությունը շուկայի վերահսկողության ոլորտում սահմանում է. «Տնտեսավարող սուբյեկտների կողմից խախտման	Ընդունվել է: Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 7-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետերը	Ընդունվել է:

			մասին հաղորդում ներկայացնելու դեպքերը եւ ներկայացնողի տվյալների գաղտնագրելու կարգը»: Հատկանշական է, որ Նախագծով սահմանված չէ հաղորդում ներկայացնելու կարգի վերաբերյալ որեւէ կարգավորում, հետեւաբար հասկանալի չէ, թե տնտեսավարող սուբյեկտների կողմից ինչ ընթացակարգով է իրականացվում խախտման մասին հաղորդում ներկայացնելը, ինչ է իրենից բովանդակում նշված հաղորդումը, ինչ կարգով այն պետք է ներկայացվի:	հանվել են Նախագծից:	
9.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 9-րդ հոդվածի 5-րդ մաս	Նախագծի 9-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված է. «Եթե վտանգավոր արտադրանքը հասել է սպառողին, ապա շուկայահանված տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող ոչ պարենային արտադրանք իրացնողը օրենքով սահմանված կարգով տեղեկացնում է սպառողներին այդ մասին՝ նախազգուշացնելով սպառողներին հնարավոր ռիսկերի մասին»: Դրանից բխում է, որ վտանգավոր արտադրանքի հայտնաբերման դեպքում իրացնողը պարտավոր է այդ մասին տեղեկացնել սպառողին:	Ընդունվել է: Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում կատարվել է համապատասխան փոփոխություն, ինչպես նաև Նախագծի 9-րդ հոդվածի 5-րդ մասը հանվել է Նախագծից՝ անհիմն կրկնությունից խուսափելու նպատակով:	Ընդունվել է:

			Նշենք, որ Նախագծով իրացնողի կողմից վտանգավոր արտադրանքի մասին սպառողին տեղեկացնելու կարգի բացակայության պարագայում հասկանալի չէ, թե օրենսդրությունը ինչ միջոցներով է ապահովում իրացնողին, որը նրան հնարավորություն կտա գտնել եւ տեղեկացնել բոլոր սպառողներին եւ որքանով է դա իրատեսական: Նշենք նաեւ, որ իրացնողի՝ վտանգավոր արտադրանքի վերաբերյալ տեղեկացնելու պարտականություն սահմանված է նաեւ Նախագծի 10-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով եւ նույն հոդվածի 4-րդ մասով: Ընդ որում՝ Նախագծի 10-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված է, որ իրացնողը պարտավոր է վտանագավոր արտադրանքի մասին տեղեկացնել ոչ միայն սպառողին, այլեւ լիազոր մարմնին եւ մատակարարին: Այս կապակցությամբ նշենք, որ Նախագծով սահմանված չէ որեւէ կարգավորում առ այն, թե ինչ ժամկետներում պետք է իրացնողը տեղեկացնի վերոնշյալ անձանց, ինչպես նաեւ նշված չէ, թե ինչ		

			եղանակով տեղեկացնելն է համարվում պատշաճ տեղեկացում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձեւավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ օրենքը պետք է ձեւակերպված լինի բավարար հստակությամբ, ինչը հնարավորություն կտա ֆիզիկական եւ իրավաբանական անձանց ողջամտորեն կանխատեսել իր վարքագծի իրավական հետեւանքները: Օրենքը պետք է օժտված լինի իրավունքի գերակայությունից բխող այնպիսի որակական հատկանիշներով, ինչպիսիք են հասանելիությունը եւ կանխատեսելիությունը: Բացի այդ, օրենքը պետք է ձեւակերպվի այնպես, որ մասնավոր անձինք օժտված լինեն հանրային իշխանության կամայական միջամտությունների դեմ արդյունավետ պաշտպանության հնարավորությամբ (տե՛ս Olsson v. Sweden (No. 1), (10465/83) գործով Եվրոպական դատարանի 24.03.1988 թվականի վճիռը, կետ 61):		

			Սահմանադրական դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ իրավական որոշակիության, իրավական անվտանգության եւ օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Առավել եւս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները: Իրավական որոշակիության սկզբունքի կապակցությամբ Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում արձանագրել է, որ որեւէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք» եթե ձեւակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ կտա անձին դրա հետ համատեղելու իր վարքագիծը (ՍԴՈ-630), վերջինս պետք է լինի		

			բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Ըստ Սահմանադրական դատարանի՝ իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի եւ չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության (տե՛ս Սահմանադրական դատարանի 02.12.2014 թվականի թիվ ՍԴՈ-1176 որոշումը): Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաեւ, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ (տե՛ս Սահմանադրական դատարանի		

			09.06.2015 թվականի թիվ ՍԴՈ-1213 որոշումը):		
10.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի ամբողջ տեքստում	Նախագծում «Հայաստանի Հանրապետության կառավարություն» բառերն՝ համապատասխան հոլավաձեւերով, առաջարկում ենք փոխարինել «Կառավարություն» բառով՝ համապատասխան հոլովաձեւերով՝ հիմք ընդունելով Սահմանադրությամբ սահմանված հասկացությունը, ինչպես նաեւ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված պահանջը, այն է՝ «1. Նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրածանոթ հասկացություններ կամ տերմիններ:»:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում, 7-րդ հոդվածի վերնագրում և 1-ին մասում, 2-րդ գլխի վերնագրում, 8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում:	Ընդունվել է:
11.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 6-րդ հոդվածի 4-րդ մաս	Նախագծի 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված է՝ «4. Կարգադրագիրը տրվում է խախտումը հայտնաբերելու պահին, ( )»: Նշված դրույթի բովանդակությունից բխում է, որ խախտումը բացահայտելու պահից Նախագծով նախատեսված դեպքերում անմիջականորեն	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն Նախագծի 6-րդ հոդվածի 4-րդ մասում:	Ընդունվել է:

			կարգադրագիր է տրվում, մինչդեռ նշենք, որ ստուգումների իրականացման միասնական կարգը սահմանող «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» օրենքի 6-րդ հոդվածով սահմանված է խախտումը բացահայտելուն հաջորդող որոշակի ընթացակարգ եւ ժամկետ. այսպես՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով կարգավորումներ են նախատեսված, որով ստուգում իրականացնող անձին տնտեսվարող սուբյեկտը կարող է ներկայացնել առարկություններ կամ առարկություններ չներկայացնելու դեպքում՝ առարկություն ներկայացնելու համար սահմանված ժամկետի ավարտից հետո երեք օրվա ընթացքում ներկայացվում է ստուգման ակտ եւ այլն: Նշված կարգավորումներից բխում է, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» օրենքի 6-րդ հոդվածը առանց որեւէ		

			բացառության նախատեսում է խախտումը հայտնաբերելու պահից որոշակի գործողությունների իրականացում եւ ժամկետներ, հետեւաբար Նախագծով նախատեսված՝ խախտումը բացահայտելուց հետո անմիջապես կարգադրագիր տալը չի համապատասխանում «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» օրենքով սահմանված խախտումը հայտնաբերելու ընթացակարգին եւ խախտումը հայտնաբերելուն հաջորդող գործողություններին:		
12.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 6-րդ հոդված	Նախագծի 6-րդ հոդվածում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով» բառերն առաջարկում ենք փոխարինել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով» բառերով՝ հիմք ընդունելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի վերնագիրը, ինչպես նաեւ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ	Ընդունվել է: Նախագծի 6-րդ հոդվածի 8-րդ մասը խմբագրվել է:	Ընդունվել է:

			մասում սահմանված իրավադրույթը, այն է՝ «5. Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը եւ «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն: Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի կրճատ անվանումը հիշատակելիս նշվում է օրենսգրքի վերնագիրը եւ «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն:»:		
13.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում սահմանված է «Լիազոր մարմին» հասկացությունը, մինչդեռ Նախագծի մի շարք հոդվածներում կիրառվում է «լիազոր մարմին» ձեւակերպումը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
14.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում սահմանված է «ոչ պարենային արտադրանք» հասկացությունը, որի համար փակագծերում սահմանվել է կրճատ տարբերակ, այն է՝ «(այսուհետ՝ արտադրանք)», մինչդեռ Նախագծի հետագա տեքստում շարունակվում է կիրառվել նաեւ «ոչ պարենային	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

			արտադրանք» ձեւակերպումը:		
15.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում սահմանված է «արտադրանքի հետկանչ» հասկացությունը: Հարկ է նկատել, որ Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում կիրառվում է «շուկայից հետ կանչելու» ձեւակերպումը, Նախագծի 10-րդ հոդվածի 5-րդ մասում «հետկանչումը» ձեւակերպումը, իսկ Նախագծի մի շարք հոդվածներում «հետկանչման գործընթաց» ձեւակերպումը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
16.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետ	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետում սահմանված է «կասեցում» հասկացությունը, որի համաձայն՝ «10) կասեցում՝ գործընթաց, որի միջոցով ժամանակավորապես արգելվում է արտադրանքի կամ արտադրանքի որոշակի խմբաքանակի իրացումը, այդ թվում՝ մինչեւ խախտման վերացումը.»: Մինչդեռ Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում կիրառվում է «իրացումը կասեցնելու» ձեւակերպումը:	Ընդունվել է: Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը խմբագրվել է:	Ընդունվել է:
17.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետ	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետում սահմանված է «կարգադրագիր» հասկացությունը:	Ընդունվել է: Նախագծի 6-րդ	Ընդունվել է:

			Մինչդեռ Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասում կիրառվում է «հանձնարականներ (կարգադրագրեր)» ձեւակերպումը, իսկ 3-րդ մասում կիրառվում է «Կարգադրագիր» ձեւակերպումը: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի համաձայն՝ «1. Նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրածանոթ հասկացություններ կամ տերմիններ: Նորմատիվ իրավական ակտում միեւնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միեւնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:»: Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք Նախագծում կիրառել Նախագծով սահմանված հասկացությունները, ինչպես նաեւ Նախագծում միեւնույն միտքն արտահայտելիս կիառել միեւնույն բառերը՝ որոշակի հերթականությամբ:	հոդվածի 1-ին մասը խմբագրվել է:	

18.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետ	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետում սահմանված է «կարգադրագիր» հասկացությունը, որի համաձայն՝ «11) կարգադրագիր՝ լիազոր մարմնի ղեկավարի կամ ծառայողի կողմից օրենքով սահմանված կարգով իրականացվող ստուգման ընթացքում կամ իրականացված ստուգման արդյունքներով արձանագրված խախտման հիման վրա իրենց իրավասության սահմաններում ընդունված ակտ.»: Մինչդեռ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» օրենքով կարգադրագիր տալու իրավասությունը վերապահված է ստուգող մարմնի (լիազոր մարմնի) պաշտոնատար անձին: Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված իրավադրույթն՝ առաջարկում ենք Նախագծում եւ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» օրենքում կիրառել նույնական հասկացություններ:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

19.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ	Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում շուկայի վերահսկողության ոլորտում սահմանված Կառավարության լիազորությունների մեջ նշվում է՝ «1. Շուկայի վերահսկողության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է՝ 1) Տեխնիկական կանոնակարգերի պահանջներին ոչ պարենային արտադրանքի համապատասխանության նկատմամբ վերահսկողության իրականացման նպատակով նմուշների ընտրության եւ նմուշառում իրականացնելու, ինչպես նաեւ փորձանմուշների գնման ֆինանսական աղբյուրների, գնված արտադրանքի տնօրինման կարգը.»: Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում սահմանված է «նշմուշառում» հասկացությունը, որի համաձայն՝ «8) նմուշառում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով վերահսկողության ընթացքում լաբորատոր փորձարկման նպատակով ոչ պարենային արտադրանքի	Ընդունվել է: Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը խմբագրվել է:	Ընդունվել է:

			նմուշների ընտրություն (նմուշներ վերցնելը)՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ այլ իրավական ակտերով եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացված Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան ընդունված փաստաթղթերով սահմանված պահանջներին համապատասխանությունը պարզելու նպատակով.»: Հիմք ընդունելով Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում սահմանված «նմուշառում» հասկացությունը՝ նշենք, որ «նմուշների ընտրությունը» ներառվում է «նմուշառում» հասկացության մեջ: Հետեւաբար առաջարկում ենք Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «նմուշների ընտրություն եւ նմուշառում իրականացնելու» ձեւակերպումը վերանայել: Բացի այդ քննարկվող դրույթում, առաջարկում ենք իրավական շփոթից խուսափելու նպատակով		

			«գնված արտադրանքի տնօրինման» բառերը փոխարինել «գնված փորձանմուշի տնօրինման» բառերով:		
20.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ	Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, որպես վերահսկողություն իրականացնող պաշտոնատար անձի իրավունք, սահմանված է՝ (մեջբերում) «Վերահսկողության ընթացքում լիազոր մարմնի վերահսկողության ոլորտները կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտումների հայտնաբերման դեպքում իրենց իրավասությունների շրջանակներում կիրառելու Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ այլ իրավական ակտերով նախատեսված սահմանափակումներ»: Նշված դրույթի բովանդակությունից բխում է, որ լիազոր մարմինը վերահսկողություն իրականացնելիս կարող է կիրառել սահմանափակումներ, որոնք նախատեսված են ոչ միայն օրենքներում , այլեւ այլ իրավական ակտերում: Սահմանադրության 39-րդ	Ընդունվել է: Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը խմբագրվել է:	Ընդունվել է:

			հոդվածով սահմանված է «Մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները եւ չի հակասում Սահմանադրությանը եւ օրենքներին: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով»: Սահմանադրության 79-րդ հոդվածով սահմանված է «հիմնական իրավունքները եւ ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը եւ ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների եւ ազատությունների կրողները եւ հասցեատերերն ի վիճակի լինեն դրսեւորելու համապատասխան վարքագիծ»: Նշված դրույթների բովանդակությունից բխում է, որ պարտականությունները, որպես իրավունքի սահմանափակում, պետք է սահմանվեն բացառապես օրենքներում, իսկ մարդու համար պարտականություն սահմանող օրենքը պետք է բավարարի հստակության, կանխատեսելիության,		

			մատչելիության որակական հատկանիշներին, որպեսզի անձը կարողանա ճիշտ կողմնորոշվել օրենքով իրենից ակնկալվող կամ պահանջվող վարքագծի հարցում: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ այլ իրավական ակտերով կարող են սահմանվել օրենքներով սահմանված սահմանափակումներ, իրավական շփոթից խուսափելու նպատակով առաջարկում ենք Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված «եւ այլ իրավական ակտերով » բառերը հանել:		
21.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ	Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում սահմանված է՝ «1. Վերահսկողություն իրականացնող պաշտոնատար անձինք իրավունք ունեն՝ ( ) 2) տնտեսավարող սուբյեկտներին տալու հայտնաբերված խախտումների վերացման կարգադրագրեր, սահմանելով ժամկետ, որը համաձայնեցնվում է տնտեսավարող սուբյեկտի հետ.»: Հարկ ենք համարում նշել, որ	Ընդունվել է: Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 9-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը խմբագրվել են:	Ընդունվել է:

			Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված է լիազոր մարմնի պաշտոնատար անձի կողմից տրվող կարգադրագրերը, որի համաձայն՝ «2. Լիազոր մարմնի պաշտոնատար անձը տալիս է՝ 1) արտադրանքի իրացումը կասեցնելու, շուկայից հետ կանչելու, օգտահանելու կամ ոչնչացնելու մասին կարգադրագրեր. 2) «Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքով սահմանված չափման միջոցների իրացումը կամ շահագործումն արգելելու մասին կարգադրագրեր:»: Այսինքն Նախագծով կարգադրագիր տալը սահմանված է ոչ միայն հայտնաբերված խախտումների վերացման դեպքում , այլեւ արտադրանքի իրացումը կասեցնելու, շուկայից հետ կանչելու, օգտահանելու կամ ոչնչացնելու դեպքերում: Հիմք ընդունելով մեջբերված դրույթն՝ առաջարկում ենք Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում լիազոր մարմնի կողմից տրվող կարգադրագրերի մասին նշում կատարելիս		

			չսահմանափակվել միայն հայտաբերված խախտումների վերացման վերաբերյալ կարգադրագրերի մասին նշմամբ: Նշենք, որ Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «հայտնաբերված խախտումների վերացման կարգադրագրեր» ձեւակերպման կիրառման արդյունքում վերահսկողություն իրականացնող պաշտոնատար անձի իրավունքներում ամրագրվում է միայն հայտաբերված խախտումների վերացման կարգադրագրեր տալու իրավունքը: Նույն դիտարկումը վերաբերելի է նաեւ Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում նշված «հայտնաբերված խախտումների եւ անհամապատասխանությունների վերացման վերաբերյալ տրված կարգադրագրեր» ձեւակերպմանը:		
22.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ	Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ «2. Սույն օրենքի շրջանակում իրականացվող վերահսկողության ընթացքում տնտեսավարող սուբյեկտը պարտավոր է՝ ( )	Ընդունվել է: Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը խմբագրվել է:	Ընդունվել է:

			2) լիազոր մարմնի պաշտոնատար անձի պահանջով ներկայացնել պահանջվող փաստաթղթերը, տվյալները, տրամադրել դրանց լուսապատճենները (լուսապատճենահանման ծախսերը կատարվում են լիազոր մարմնի կողմից), կրկնօրինակները եւ այլ տեղեկություններ:»: Նշենք, որ Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում սահմանված է վերահսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց ծառայողական պարտականությունները կատարելիս անհրաժեշտ տեղեկություններ, բացատրություններ, փաստաթղթեր, պատճեններ, լուսապատճեններ, իրեր, փորձանմուշներ եւ գործին վերաբերող այլ նյութեր պահանջելու իրավունքը: Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք տնտեսվարող սուբյեկտի կողմից լիազոր մարմնի պաշտոնատար անձի պահանջով ներկայացվող նյութերի ցանկը համապատասխանեցնել լիազոր մարմնի սահմանված գործին վերաբերող նյութեր պահանջելու իրավուքնում թվարկված նյութերի ցանկին:		
23.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 6-րդ կետեր	Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ եւ 6-րդ կետերի համաձայն՝ « 2. Սույն օրենքի շրջանակում	Ընդունվել է:	Ընդունվել է:

			իրականացվող վերահսկողության ընթացքում տնտեսավարող սուբյեկտը պարտավոր է՝ 3) սահմանված ժամկետում կատարել վերահսկողության արդյունքներով հայտնաբերված խախտումների եւ անհամապատասխանությունների վերացման վերաբերյալ տրված կարգադրագրերը՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով լիազոր մարմնին. ( ) 6) կարգադրագրով սահմանված ժամկետում կատարել կարգադրագրի պահանջները.»: Հարկ է նկատել, որ Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում սահմանված է տնտեսվարող սուբկետի կողմից կարգադրագրի կատարման պարտականությունը, իսկ 6-րդ կետում տնտեսվարող սուբյեկտի կարգադագրի պահանջների կատարման պարտականությունը: Նախագծում առաջարկում ենք բացառել անհիմն կրկնությունը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված իրավադրույթը, այն է՝ «8. Նորմատիվ իրավական	Նախագծից հանվել է 9-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը:	

			ակտերում բացառվում են իրավական նորմերի անհիմն կրկնությունները եւ ներքին հակասությունները:»:		
24.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 9-րդ հոդվածի 5-րդ մաս	Նախագծի 9-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «5. Եթե վտանգավոր արտադրանքը հասել է սպառողին, ապա շուկայահանված տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող ոչ պարենային արտադրանք իրացնողը օրենքով սահմանված կարգով տեղեկացնում է սպառողներին այդ մասին՝ նախազգուշացնելով սպառողներին հնարավոր ռիսկերի մասին:»: Մեջբերված իրավակարգավորումը սահմանում է իրացնողի պարտականություն: Մինչդեռ հարկ է նկատել, որ Նախագծի 9-րդ հոդվածը վերնագրված է «Տնտեսվարող սուբյեկտի իրավունքները եւ պարտականությունները»: Առաջարկում ենք ապահովել Նախագծի 9-րդ հոդվածի վերնագրի եւ բովանդակության համապատասխանությունը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված պահանջը, այն է՝ «Հոդվածների վերնագրերը համապատասխանում են հոդվածների բովանդակությանը:»:	Ընդունվել է: Նախագծից հանվել է 9-րդ հոդվածի 5-րդ մասը:	Ընդունվել է:

25.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 10-րդ հոդված	Նախագծի 10-րդ հոդվածը վերնագրված է «Տնտեսվարող սուբյեկտի պարտավորությունները վտանգավոր արտադրանք շուկայահանելու դեպքում»: Մինչդեռ Նախագծի 10-րդ հոդվածի 3-5-րդ մասերը նախատեսում են իրացնողի պարտավորությունների մասին կարգավորումներ, 6-րդ մասում սահմանված է լիազոր մարմնի պարտավորություն, իսկ 8-րդ մասում սահմանված իրավակարգավորումը վերաբերում է վտանգավոր արտադրանքի խմբաքանակի հաշվառմանը եւ պահմանը: Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված պահանջն՝ առաջարկում ենք ապահովել Նախագծի 10-րդ հոդվածի վերնագրի եւ բովանդակության համապատասխանությունը:	Ընդունվել է: Նախագծի 10-րդ հոդվածի վերնագիրը, 10-րդ հոդվածի 3-5 մասերն խմբագրվել են:	Ընդունվել է:
26.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 10-րդ հոդվածի 5-րդ մաս	Նախագծի 10-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված է. «Վտանգավոր արտադրանքի հետկանչումը, փորձարկումը, փոխադրումը, պահումը, կամ ոչնչացումը կատարվում են տվյալ արտադրանքը տնօրինողի միջոցների հաշվին»: Նշված ձեւակերպումից հասկանալի չէ, թե ով կարող է Նախագծի համատեքստում համարվել տնօրինող: Օրինակ սպառողի	Ընդունվել է: Նախագծի 10-րդ հոդվածի 5-րդ մասն խմբագրվել է:	Ընդունվել է:

			կողմից վտանգավոր արտադրանքի ձեռքբերման պահից, այսինքն՝ վերջինիս՝ վտանգավոր արտադրանքի տնօրինող հանդիսանալու պահից, վտանգավոր արտադրանքի հետկանչման, փորձարկման, փոխադրման, պահման կամ ոչնչացման իրականացման համար ինչու պետք սպառողի միջոցներով իրականացվի հետկանչը: Տվյալ պարագայում հասկանալի չէ քննարկվող նորմով սպառողի վրա նման ֆինանսական պարտավորություն դնելու նպատակահարմարությունը:		
27.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի ողջ տեքստում	Նախագծի ողջ տեքստում կիրառվում են «տնտեսվարող սուբյեկտ», «իրացնող», «տնօրինող» բառերը: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նշված եզրույթները հստակ սահմանված չեն Նախագծով, ինչպես նաեւ այն, որ վերոնշյալ սուբյեկտների համար սահմանված են առանձին կարգավորումներ՝ ենթադրելի է, որ դրանք միեւնույն միտքը չեն արտահայտում: Այս համատեքստում հարկ է անդրադառնալ Նախագծի 12-րդ հոդվածին, որով սահմանված է. «Սույն օրենքի պահանջները խախտող Լիազոր մարմնի պաշտոնատար անձինք եւ տնտեսավարող սուբյեկտները պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով»:	Ընդունվել է: Նախագծի ողջ տեքստում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

			Այսպես՝ Նախագծի 12-րդ հոդվածով սահմանվում է, որ Նախագծով սահմանված պահանջների խախտման համար պատասխանատվություն կրում են միայն լիազոր մարմնի պաշտոնատար անձինք եւ տնտեսվարող սուբյեկտները, մինչդեռ Նախագծով պարտականություններ են նախատեսվում նաեւ այլ սուբյեկտների համար, ինչպես օրինակ՝ իրացնողի կամ տնօրինողի համար:		
28.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մաս	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասով սահմանվում է տվյալ օրենքի կարգավորման առարկան եւ գործողության ոլորտը, որտեղ նշվում է նաեւ. «արտադրական կանեփի արտադրության, արտահանման, ներմուծման կամ մեծածախ առեւտրի լիցենզավորման, քվոտավորման եւ օրինական շրջանառության ոլորտներում իրականացվող վերահսկողության հիմնական սկզբունքները»: Խնդիրը կայանում է նրանում, որ արտադրական կանեփի արտադրության, արտահանման, ներմուծման կամ մեծածախ առեւտրի ոլորտում լիցենզավորումն ու քվոտավորումը պետական լիազորություններ են եւ իրականացվում են պետական մարմինների կողմից, հետեւաբար՝	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասը և 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը խմբագրվել են:	Ընդունվել է:

			չեն կարող հանդիսանալ տեսչական մարմնի վերահսկողության առարկա: Այս կապակցությամբ, հնարավոր տարընթերցումներից խուսափելու նպատակով, առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի «արտադրական կանեփի արտադրության, արտահանման, ներմուծման կամ մեծածախ առեւտրի լիցենզավորման, քվոտավորման եւ օրինական շրջանառության ոլորտներում» բառերը փոխարինել «արտադրական կանեփի արտադրության, արտահանման, ներմուծման կամ մեծածախ առեւտրի ոլորտներում» բառերով: Նույն փոփոխությունն անհրաժեշտ է կատարել նաեւ Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում:		
29.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ	Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ շուկայի վերահսկողության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է. «...փորձանմուշների գնման ֆինանսական աղբյուրների, գնված արտադրանքի տնօրինման կարգը.»: Եթե գնված արտադրանքի տնօրինման կարգի սահմանումը միանգամայն հասկանալի է, ապա նույնը չի կարելի ասել «փորձանմուշների գնման ֆինանսական աղբյուրների...տնօրինման կարգի»	Ընդունվել է: Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը խմբագրվել է:	Ընդունվել է:

			մասին, քանի որ այդ միակ աղբյուրը պետական բյուջեն է, որի տնօրինման կարգ էլ չի կարող սահմանվել: Տվյալ տարընթերցումից խուսափելու նպատակով առաջարկում ենք այս մասում «փորձանմուշների գնման ֆինանսական աղբյուրների» բառերը փոխարինել «փորձանմուշների գնման ֆինանսավորման աղբյուրները» բառերով (եթե նպատակը այդ աղբյուրների բազմազանության ապահովումն է), կամ էլ՝ «փորձանմուշների գնման ֆինանսավորման եւ» բառերով, եթե այս կապակցությամբ Նախագծի հեղինակը հատուկ կարգ սահմանելու խնդիր է դնում:		
30.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ	Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանվում է, որ տվյալ օրենքի շրջանակում իրականացվող վերահսկողության ընթացքում տնտեսավարող սուբյեկտն իրավունք ունի. «իր շահերի պաշտպանության նպատակով՝ վերահսկողության ցանկացած փուլում վերահսկողությանը մասնակից դարձնելու մասնագետների, փորձագետների, աուդիտորների, փաստաբանների.», որի հստակեցման եւ հնարավոր տարընթերցումներից խուսափելու նպատակով առաջարկում ենք մեջբերված տեքստից հանել	Ընդունվել է: Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը խմբագրվել է:	Ընդունվել է:

			«վերահսկողությանը մասնակից դարձնելու» բառերը (քանի որ տնտեսավարող սուբյեկտը ոչ թե վերահսկող, այլ վերահսկվող կամ ստուգվող կողմն է), իսկ «ցանկացած փուլում» բառերից հետո էլ առաջարկում ենք ավելացնել «սեփական միջոցների հաշվին» բառերը:		
31.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 12-րդ հոդված	Նախագծի 12-րդ հոդվածով սահմանվում է, որ. «Սույն օրենքի պահանջները խախտող Լիազոր մարմնի պաշտոնատար անձինք եւ տնտեսավարող սուբյեկտները պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:», սակայն տվյալ Նախագծով սահմանվող նոր պահանջների խախտման համար որեւէ օրենքով պատասխանատվության տեսակներ եւ կարգ սահմանած չէ, ինչն էլ առաջարկում ենք կատարել նոր (համապատասխան) նախագծերի մշակման եւ սույն Նախագծի հետ միասին՝ որպես նախագծերի փաթեթ ներկայացնելու միջոցով:	Ընդունվել է: Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի կողմից կնախաձեռնվեն համապատասխան օրենսդրական ակտերի նախագծեր:	Ընդունվել է:
32.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «ոչ պարենային արտադրանք» հասկացությունը բավականին ընդհանարական է տրված եւ մեկնաբանման տեսանկյունից կարող է խնդրահարույց լինել:	Ընդունվել է: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ոչ պարենային արտադրանք» համարվող արտադրանքի	Ընդունվել է:

				տեսակները բազում են, և ունեն միայն տվյալ արտադրանքին բնորոշ հատկանիշներ և ներկայացվող պահանջներ, որոնք իրենց հերթին ամրագրված են համապատասխան իրավական ակտերում (ենթաօրենսդրական ակտերում, ՏԿ), ուստի դրանց ամրգրագրումը և հասկացության խմբագրման անհրաժեշտությունը բացակայում է:	
34.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մաս	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասում նշվում է, որ՝ «Լիազոր մարմնի պաշտոնատար անձը ստուգման ակտի հիման վրա, օրենքով սահմանված իր իրավասությունների շրջանակներում, տնտեսավարող սուբյեկտին տալիս է հանձնարարականներ (կարգադրագրեր) բացահայտված խախտումների եւ թերությունների վերացման ուղղությամբ՝ սահմանելով ժամկետներ դրանց վերացման համար», միեւնույն ժամանակ նախագծի 8-րդ հոդվածի	Ընդունվել է: Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասն խմբագրվել է: Հարկ է նշել, որ խախտումների վերացման ժամկետի մասով համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վերահսկողություն իրականացնող պաշտոնատար անձի եւ	Ընդունվել է:

			1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ «Վերահսկողություն իրականացնող պաշտոնատար անձինք իրավունք ունեն՝ տնտեսավարող սուբյեկտներին տալու հայտնաբերված խախտումների վերացման կարգադրագրեր՝ սահմանելով ժամկետ, որը համաձայնեցվում է տնտեսավարող սուբյեկտի հետ»: Ստացվում է, որ 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ խախտումների վերացման ժամկետը պետք է համաձայնեցվի տնտեսավարող սուբյեկտի հետ, մինչդեռ 6-րդ հոդվածի 1-իմ մասում տնտեսավարող սուբյեկտի հետ խախտումների վերացման ժամկետի համաձայնեցման պայման նախատեսված չէ: Բացի նշվածից, 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի մասով հետեւյալ հարցն է առաջանում՝ իսկ եթե խախտումների վերացման ժամկետի մասով այդպես էլ համաձայնություն ձեռք չի բերվում վերահսկողություն իրականացնող պաշտոնատար անձի եւ տնտեսավարող սուբյեկտի միջեւ, ապա ի՞նչ ընթացակարգ է գործում:	տնտեսավարող սուբյեկտի միջեւ իրավադրույթ նախատեսված է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքի 6-րդ հոդվածով:	
34.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ	Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ «Վերահսկողություն իրականացնող պաշտոնատար անձինք իրավունք ունեն՝ վերահսկողության ընթացքում ծագող հատուկ գիտելիքներ	Ընդունվել է: Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը խմբագրվել է:	Ընդունվել է:

			պահանջող հարցերի պարզաբանման համար ներգրավելու փորձագետների»: Արդյո՞ք նշված փորձագետները ներգրավվելու են վճարովի հիմունքներով եւ արդյո՞ք նախատեսվելու է փորձագետ ներգրավելու անհրաժեշտ դեպքերը եւ պայմանները սահմանող ընթացակարգ:		
35.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ	Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն. «Լիազոր մարմնի պաշտոնատար անձինք պարտավոր են՝ սահմանված կարգով եւ ժամկետներում դիմումները եւ բողոքները քննության առնել եւ դրանց ընթացք տալ»: Առաջարկում ենք հստակեցնել՝ ու՞մ եւ ի՞նչ բնույթի դիմումներ եւ բողոքներ քննության առնելու մասին է խոսքը, ի՞նչով են սահմանվում դիմումները եւ բողոքները քննության առնելու եւ դրանց ընթացք տալու ժամկետները:	Ընդունվել է: Դիմում-բողոքների ընդունման, դրանց հետագա ընթացք տալու վերաբերյալ իրավակարգավորումներ նախատեսված են «Տեսչական մարմինների մասին» օրենքով:	Ընդունվել է:
36.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ	9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշվում է՝ «Սույն օրենքի շրջանակում իրականացվող վերահսկողության ընթացքում տնտեսավարող սուբյեկտը իրավունք ունի՝ իր շահերի պաշտպանության նպատակով՝ վերահսկողության ցանկացած փուլում վերահսկողությանը մասնակից դարձնելու մասնագետների, փորձագետների, աուդիտորների,	Ընդունվել է: Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը խմբագրվել է:	Ընդունվել է:

			փաստաբանների»: Հարց է առաջանում՝ մասնագետների, փորձագետների, աուդիտորների, փաստաբանների ներգրավման արդյունքում տնտեսավարող սուբյեկտի իրավացիությունն ապացուցվելու դեպքում՝ արդյո՞ք լիազոր մարմնի կողմից փոխհատուցվելու են վերոնշյալ անձանց ծառայություններից օգտվելու հետ կապված տնտեսավարող սուբյեկտի կատարած ծախսերը, այդ կապակցությամբ նախատեսվու՞մ է արդյոք համապատասխան ընթացակարգի սահմանում:		
37.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ	9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշվում է, որ՝ «Սույն օրենքի շրջանակում իրականացվող վերահսկողության ընթացքում տնտեսավարող սուբյեկտը իրավունք ունի՝ խախտման մասին հաղորդում ներկայացնել լիազոր մարմին»: Առաջարկում ենք նշել՝ ու՞մ խախտումների մասին է խոսքը:	Ընդունվել է: Նախագծից հանվել է 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը:	Ընդունվել է:
38.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ	Հաշվի առնելով 9-րդ հոդվածի 3-րդ մասը՝ առաջարկում ենք վերանայել Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշված «վտանգավոր արտադրանք» հասկացության սահմանումը: Արդյո՞ք «վտանագավոր արտադրանք» հասկացությունն ամբողջությամբ կլանում է 9-րդ հոդվածի 3-րդ	Ընդունվել է: Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը խմբագրվել է:	Ընդունվել է:

			մասում մինչեւ «կամ» բառն ընկած պայմաններին /դեպքերին/ համապատասխանող արտադրանքը: Նշվածի համատեքստում, խնդրում ենք վերանայել նաեւ Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը: Վերանայման դեպքում անհրաժեշտ կլինի դիտարկել Նախագծի տեքստում «վտանգավոր արտադարանք» հասկացությունը պարունակող, ինչպես նաեւ արտադրանքի հետկանչմանը վերաբերող դրույթները.		
39.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 10-րդ հոդվածի 5-րդ մաս	10-րդ հոդվածի 5-րդ մասում նշվում է, որ՝ «Վտանգավոր արտադրանքը իրացնողը պարտավոր է սկսել հետկանչման գործընթացն ինքնուրույն կամ լիազոր մարմնի պահանջով: Վտանգավոր արտադրանքի հետկանչումը, փորձարկումը, փոխադրումը, պահումը կամ ոչնչացումը կատարվում են տվյալ արտադրանքը տնօրինողի միջոցների հաշվին»: Հոդվածի տրամաբանությունն անհասկանալի է այն առումով, որ արտադրանքը գնող քաղաքացին դառնում է դրա տնօրինողը, եւ հետեւաբար, հարց է առաջանում վերջինիս կողմից ծախսեր կատարելու մասով:	Ընդունվել է: Նախագծի 10-րդ հոդվածի 5-րդ մասն խմբագրվել է:	Ընդունվել է: